

Վ. Ա. ԳԱՐՏԱՆ

ՏՆՏԵՍԱԴԻՏԱԿԱՆ ՏԵՐԻՆՆԵՐԻ ՇՓՈԹՐ ՁԻ ՎԵՐԱՑՎՈՒՄ

Հայերեն տնտեսագիտական տերմինների պահանջը չափազանց հրատապ է դարձել հատկապես այն պատճառով, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում խոշոր չափով առաջ է ընթացել սովետական տնտեսական գիտությունը՝ հարստանալով նորանոր հասկացություններով: Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի բուռն պարզացման հետ զուգընթաց ռուսական լեզվի մեջ առաջ են եկել սոցիալիզմից կոմունիզմին անցման ժամանակաշրջանին հատուկ նոր տնտեսագիտական տերմիններ, որոնք հայ տնտեսագիտական գրականության մեջ պետք է գործածվեն առաջին անգամ:

Սովետական իշխանության տարիներին հսկայաքայլ առաջընթաց ապրեց մեր կուլտուրան, մեծ ծավալ ստացավ տնտեսագիտական գրականության հայերեն թարգմանությունների հրատարակությունը, հայերեն թարգմանությունամբ լույս տեսան մարքսիզմ-լենինիզմի կլասիկների գործերը՝ «Կապիտալ»-ի հատորների և քաղաքատնտեսության դասագրքերի թարգմանությունները և այլն: Արդյունաբերության բազմաթիվ նոր ճյուղերի ստեղծման հետևանքով՝ արդյունաբերության տարբեր ճյուղերի էկոնոմիկայի վերաբերյալ մեծ թվով և քանակով նոր գրականություն հրատարակվեց: Առաջ եկան և լայն գործածության մեջ մտան բազմաթիվ նոր տնտեսագիտական հասկացություններ և նոր տերմիններ ու բառեր, որոնք հայերենում առաջին անգամ էին գործածվում: Առանձնապես պետք է նշել ժողովրդական տնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը, կապը, առևտուրը և այլն, որտեղ հանդես եկան մեծ քանակությամբ նոր բառեր և տերմիններ, որոնց հայերեն ճիշտ գործածությունը վաղուց արդեն առաջնահերթ խնդիր է դարձել:

Մինչ այժմ լույս տեսած ռուս-հայերեն բառարաններում հաճախ բացակայում են հստակ և ճիշտ թարգմանություններն այն տերմինների, որոնք գործ են ածվում արդյունաբերության տարբեր ճյուղերի էկոնոմիկային նվիրված գրականության մեջ:

Իսկ բազմաթիվ թարգմանություններում գոյություն ունեցող տերմինների բազմերանգությունը հնարավորություն չի տալիս ճիշտ կողմնորոշվելու, շփոթ է ստեղծում հասկացությունների մեջ:

Բերենք մի քանի օրինակներ: Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսած ռուս-հայերեն քառահատոր բառարանի երրորդ հատորի 12-րդ էջում «ПАЗОБКА» բառը թարգմանված է «փաթեթում», «դարսում», «հակ կապելը», «դարսելը», «փաթեթեցելը», այնինչ, այդ բառի տնտեսագիտական նշանակությունը արդյունաբերության մեջ բոլորովին այլ է, այն նշանակում է «կռանվածք» կամ «սպտրաստուկ»:

Նույն բառարանի 4-րդ հատորի 516-րդ էջում «УПАКОВКА» բառը դարձյալ թարգմանված է նույն ձևով՝ «դարսում», «տեղավորում», «դարսելը», «տեղա-

վորելը», «փաթթում», «փաթթոցում», «ծրարում», «փաթթելը», «ծրարելը» և այլն: Այստեղից երևում է, թե ինչպիսի շփոթ կարող է ստեղծվել, երբ տարբեր ձևերով և երանգներով թարգմանվող բառերը գործ են ածվում առանց կոնտեքստի մասնագիտական իմաստավորման:

Կարե՞լի է արդյոք ասել, օրինակ՝ «տնտեսագիտական գիտությունների թեկնածու կամ դոկտոր»: Այս արտահայտությունը հաճախ ենք հանդիպում մեր պարբերական մամուլում: Իհարկե, ոչ: Այս դեպքում ճիշտ կլինի ասել «տնտեսական գիտությունների թեկնածու կամ դոկտոր»: Հաճախ միևնույն ձևով գրվող բառերը տարբեր կոնտեքստներում գործ են ածվում տարբեր նշանակությամբ: Օրինակ՝ «ЭКОНОМИЯ» նշանակում է «տնտեսություն», իսկ մի ուրիշ դեպքում «ЭКОНОМИЯ»-ն թարգմանվում է «խնայողություն»: Բայց իրականում «ЭКОНОМИЯ» բացի «տնտեսություն»-ից, նշանակում է նաև «տնտեսում»: Ինչո՞ւ: Որովհետև «խնայողություն» տերմինի դիմաց կա ուսերեն «сбережение» բառը: Օրինակ, «сберегательная касса» «խնայողական դրամարկղ»: Զենք ասում՝ «տնտեսման դրամարկղ»: Իսկ եթե մեկ տրված է այսպիսի մի արտահայտություն՝ «экономия и бережливость», որը հաճախ է գործածվում տնտեսագիտական գրականության մեջ, այս դեպքում, ինչպե՞ս թարգմանել: Նման դեպքում, իհարկե, թարգմանվում է «տնտեսում և խնայողություն»:

Ուրեմն մեր կարծիքով «ЭКОНОМИЯ» հասկացությանը ավելի համապատասխանում է «տնտեսում» հայերեն տերմինը և ոչ «խնայողություն», ինչպես հաճախ գործ է ածվում մեր մամուլում:

Բուրժուазիայի դպրոցների համար հրատարակված «Քաղաքատնտեսության դասագրքի» 172-րդ էջում «тенденция нормы прибыли на понижение» արտահայտությունը թարգմանված է «շահույթի նորմայի իջնելու տենդենց», իսկ երկու էջ հետո այդ նույն ուսերեն «понижение» բառը թարգմանված է այսպես. «շահույթի նորմայի նվազելու տենդենցի օրենքը» կամ 179-րդ էջում՝ «շահույթի ընդհանուր (միջին) նորմայի նվազման տենդենցի օրենք»:

Տնտեսագիտական կատեգորիաներ արտահայտող տերմինների միատեսակություն չկա «Քաղաքատնտեսության» նոր դասագրքում: Օրինակ՝ «общественное хозяйство» հասկացությունը՝ 623-րդ էջում թարգմանված է «հասարակական տնտեսություն», իսկ 625-րդ էջում՝ «հանրային տնտեսություն», կամ ուսերեն «в денежном выражении» տերմինը թարգմանված է «փողային արտահայտությամբ», իսկ «денежные доходы» և «денежные средства» «դրամական եկամուտներ» և «դրամական միջոցներ»: Նույն գրքում մի ուրիշ տեղ «сельскохозяйственная продукция»-ն թարգմանված է «գյուղատնտեսական արդյունքներ», իսկ մի ուրիշ տեղ «արդյունք»-ի փոխարեն «արտադրանք»: Իհարկե, մեզ կառարկեն, որ «հանրային» և «հասարակական», «փողային» և «դրամական» հասկացությունների միջև տարբերություն չկա: Բայց մենք գործ ունենք տերմինների հետ, որոնք բոլոր դեպքերում պետք է լինեն միասնական: Այդ չի նշանակում, թե մեկը կամ մյուսը հանվում է հայոց լեզվի բառարաններից: Այստեղ, օրինակ, ճիշտ կլինի գործածել միայն «հանրային», «դրամական» տերմինները, իսկ մյուսները գործածել մի այլ կապակցության մեջ:

«Рост» բառը թարգմանվում է «աճ», ոմանք էլ «աճում», այնինչ «рост»-ը միմիայն «աճումն» է, իսկ «прирост»-ը «աճն» է և այլն: Մեր կար-

ծիրքով, ճիշտ կլինի «ПРОРОК»-ի դիմաց հայերեն դնել «հավելաճ» տերմինը. այս դեպքում «աճի» և «աճման» միջև գոյություն ունեցող շփոթը կվերանա: Այս դեռ բավական չէ:

Հորինվեցին բաղմաթիվ նոր բառեր և տերմիններ, որոնց գործածությունը հեռու է հայկական ստուգաբանությունից և չի կարող համակերպվել հայերեն լեզվի հետ:

Բնական է, որ այս աննորմալ երևույթը վերացնելու համար անհրաժեշտ է հայոց լեզվի մեջ ևս գործածել համապատասխան տերմիններ և ուսական տնտեսագիտական գրականության հայերեն թարգմանություններում պահպանել միօրինակություն:

Դժբախտաբար, հայերեն թարգմանություններում գոյություն ունեցող ուսերենի միանշանակ տերմինների թարգմանության բաղմերանգությունը ստեղծում է խառնաշփոթ վիճակ և տարակուսանք է առաջացնում տնտեսագիտական գրականություն կարդացող հազարավոր մարդկանց, ուսանողների, անհատական ուսումնասիրողների մեջ, այն թույլ չի տալիս ճիշտ հասկանալու տարբեր աղբյուրներում նույնանման հասկացությունների շարադրությունը: Այդ կապակցությամբ բերենք մի քանի օրինակ ևս. «рентабельность» բառը մենք հանդիպում ենք տարբեր թարգմանություններում մի քանի ձևով: Մի թարգմանիչ գործ է անում «շահութաբերություն», մյուսը՝ «եկամտաբերություն», երրորդը՝ «արդյունավետություն», չորրորդը՝ «շահավետություն»: Իսկ որոշ ամսագրեր այդ տերմինի դիմաց գործ են անում նաև «հասութաբերություն» տերմինը, այս դեպքում պետք է գործածել միմիայն մի տերմին, որը լավագույն կերպով կարտահայտի «рентабельность» տերմինի բովանդակությունը, դա ռենտաբերություն տերմինն է: «Продукция» բառը թարգմանում են «արտադրանք» կամ «արդյունք»: Այստեղից երևում է, որ տերմինների թարգմանությունների մեջ չկա միօրինակություն, այլ գոյություն ունի շփոթ:

Մասնագիտական տնտեսագիտական տերմինների բառարաններում չի կարելի բացատրել բառերի տարբեր երանգներն ու տարբեր առումները: Դա թեմատիկ բառարանների նպատակից դուրս է: Ռուս-հայերեն տնտեսագիտական բառարան կազմելիս պետք է առաջնորդվել տերմինների հայերեն գործածվող թարգմանության ձևերով, աշխատել հնարավորին չափ հայերեն համապատասխան և համանշանակ բառով արտահայտել ուսերեն յուրաքանչյուր տերմին և աշխատել այն տալ միայն մեկ տերմինով, անհրաժեշտության դեպքում միաժամանակ ցույց տալով նաև համանշանակ երկրորդ տերմինը: Զույգ է տալ տերմինների տարբեր երանգներ, տարբեր կոնտեքստերում: Իսկ եթե որոշ դեպքերում փորձ է արվում տալ տերմինի նշանակության երանգային տարբերությունները, ապա այդ պետք է անել բացառիկ դեպքերում, ելնելով դրանց միմիայն տնտեսագիտական որոշ կոնտեքստերում տարբեր նշանակությամբ գործածվելու անհրաժեշտությունից: Այս դեպքում տերմինները կարելի է տալ կապակցություններով: Այսպես պետք է մոտենալ, երբ որևէ մեկը փորձ է անում թեմատիկ բառարան կազմել, օրինակ, դուրս տնտեսագիտական, հաշվապահական, վիճակագրական, պոլիտեխնիկական, բժշկական, երկրաբանական և այլն:

Յուրաքանչյուր բառ այնքան բաղմիմաստ է, այնքան դիալեկտիկ և այնքան ընդունակ ամեն մի կոնտեքստում արտահայտելու ավելի ու ավելի շատ իմաստային երանգներ, որ անհրաժեշտ է մեծ վարպետություն, որպեսզի մար-

դր կարողանալ այնպես ուղիղ և ճշտորեն արտահայտել իր միտքը, որ որևէ տարակուսանք չհարուցի իր գործածած բառերի նկատմամբ:

Բառերի բազմակողմանիությունը և բաղմանշանակելիությունը տարբեր կոնտեքստերում սխալ գործածելու դեպքում հաճախ ստեղծվում է հասկացությունների շփոթ, երբ բառը չի գործածվում ըստ իր նշանակության, այլ դրվում է թարգմանված նախադասության մեջ, առանց կոնտեքստի հաշվառման, առանց մասնագիտական իմաստավորման: Այն, ինչ բնորոշ է հանրագիտական բառարանների համար, այլ է մասնագիտական տերմինների բառարանների համար:

Բառերի բազմազան իմաստային երանգները հաճախ ոչ ճիշտ օգտագործելու հետևանքով խառնաշփոթություն է առաջացել տնտեսագիտական գրականության մեջ, և յուրաքանչյուր հեղինակ կամ թարգմանիչ տարբեր տերմիններով է թարգմանում նույն հասկացությունները: Մինչև օրս բացակայում է տնտեսագիտական տերմինների թարգմանության միօրինակությունը: Շատ հաճախ ռուսերեն գործածվող նույնանման տնտեսագիտական տերմիններ տարբեր հեղինակների և թարգմանիչների մոտ գրվում են տարբեր ձևերով: Մեր միտքն ավելի պարզ դարձնելու համար բերենք դարձյալ մի քանի օրինակներ. «производственная мощность» հասկացությունը թարգմանվում է «արտադրական կարողություն» և «արտադրական հզորություն»: «продукция» բառը թարգմանվում է «արտադրանք», «արդյունք», «ЭКОНОМИЯ»-ն՝ «տնտեսություն», «տնտեսում», «խնայողություն» և այլն:

Իհարկե, երբ մենք ուզում ենք ասել «продукт труда», ապա պետք է թարգմանել «աշխատանքի արդյունք» և ոչ «աշխատանքի արտադրանք»: Այս դեպքում ճիշտ է «արդյունք» բառի գործածությունը ռուսերեն «продукт» բառի փոխարեն: Բայց «продукция»-ի փոխարեն «արդյունք» գործածելը սխալ է, պետք է ասել «արտադրանք»:

Տնտեսագիտական տերմինների բառարանում թարգմանված բառերը պետք է ունենան միայն տնտեսագիտական նշանակություն, ավելի ճիշտ կլինի ասել, որ բառերի թարգմանությունը պետք է կատարել նկատի ունենալով դրանց միմիայն տնտեսագիտական նշանակությունը: Օրինակ, «пропорциональность» բառը, որը գիտության տարբեր ճյուղերում տարբեր նշանակություն ունի: Ուստի պետք է խուսափել տնտեսագիտական բառարանում դիտության մյուս ճյուղերում գործածվող ձևերը ևս թարգմանաբար զետեղել: Նման բոլոր ձևերի թարգմանությունը խոշոր ծավալով հրատարակվող ընդհանուր հանրագիտական բառարանների համար է հատկանշական և պարտադիր: Իսկ նեղ մասնագիտական բառարանների համար այդ ձևը բացառվում է: Տնտեսագիտական բառարանում պետք է տալ միայն բառի տնտեսագիտական թարգմանությունը: Ուստի այս դեպքում պետք է տալ միայն «пропорциональность» տերմինի տնտեսագիտական ձևը՝ «համամասնություն»: Իսկ բժշկության մեջ գործածվող «пропорциональность телосложения» «մարմնի կառուցվածքի համաչափություն», մաթեմատիկայում՝ «համեմատականություն», կամ «обратная пропорциональность» «հակադարձ համեմատականություն», կամ «прямая пропорциональность» «ուղիղ համեմատականություն» և այլ ձևերը, այսինքն՝ «пропорциональность» բառի մյուս թարգմանությունները տնտեսագիտական բառարանում չեն տրվում, տրվում է «пропорциональность» տերմինի միայն տնտեսագիտական թարգմանությունը՝ «համամաս-

նություն»։ Նույն ձևով պետք է կատարել նաև մյուս բառերի՝ տերմինների թարգմանությունները։

Այսպիսով, մեր վերոհիշյալ օրինակներից երևում է, որ «տերմին» ասելով, պետք է հասկանալ բառերի գործածության լրիվ որոշակիության նշանակությունը և կայունությունը։ Ուրեմն՝ որոշակիությունը և կայունությունը «տերմին» հասկացության բնորոշ հատկանիշներն են։

Այս կապակցությամբ մենք պետք է նշենք, որ ընդհանրապես մեր խոսակցական բառերը մեծ թե փոքր չափով բաղմանշանակ են, և որպեսզի դրանք հասկանալի լինեն մեկ ուրիշին այնպես, ինչպես հասկանում է ձեզ հետ խոսակցողը կամ ձեզ գրավոր դիմողը, ապա կարիք ունեն սովորաբար ճշտումների՝ մի բան, որին հնարավոր է հասնել մասնագիտական տերմինների ճիշտ գործածությամբ։

Բացի դրանից, սովորական խոսակցական լեզվի համար բնորոշ է նաև այն հանգամանքը, որ բառերը բացի իրենց անմիջական իմաստից, ունեն նաև փոխաբերական նշանակություն, շնորհիվ այն բանի, որ դրա իմաստը կարող է նմանություն ունենալ այլ բովանդակությամբ գործածվող նույն բառի հետ, որը խոսակցության մեջ գործ է ածվում որոշ նպատակով, որոշ դրա ուղղակի նշանակությամբ։ Զանազան տեքստերի մեջ բառերը կարող են ունենալ նաև հոգեբանական գունավորում։ Դրանք կարող են գունազարդվել զգացմունքներով (էմոցիաներով և այլն)։

Սակայն կա մտածողության հատուկ բնագավառ, և այդպիսին առաջին հերթին հանդիսանում է գիտությունը, որի համար հոգեբանական գունազարդումը շատ քիչ նշանակություն ունի։ Գիտության բնագավառում ամեն ինչ ենթակա է իրականության զուտ ինտելեկտուալ (տրամաբանական) իմացության, և այդ պատճառով դրանց համար առաջնակարգ նշանակություն ունի գլխավորապես լեզվի ճշտությունը։ Այդ նպատակով գիտության բնագավառում ընդունված է գործածել խիստ պայմանական, մի շափազանց որոշակի հասկացություն ունեցող, այսինքն՝ սկզբից ևեթ նախատեսված նշանակություն ունեցող և սկզբունքորեն լրացուցիչ որևէ ազդեցիկ մտապատկերներ չստեղծող բառեր։ Դրանք (որքան այդ հնարավոր է մարդկային լեզվի հատկություններին) հատուկ մշակված և պայմանականորեն ընդունված բառեր են, որոնք կոչվում են տերմիններ։

Տերմինների սիստեմում բաղմանշանակությունը կամ, ինչպես ասում են, պոլիսեմիան սովորաբար կորցնում է իր նշանակությունը։

Տերմինը ձգտում է դեպի միանշանակության կամ, ինչպես ասում են, մոնոսեմիայի։ Յուրաքանչյուր գիտական տերմին ունի սովորաբար մեկ, խստորեն որոշված նշանակություն։

Այս կամ այն տերմինի բաղմանշանակությունը ընկալվում է որպես թերություն և հաճախ ստեղծում է շփոթ։

Օրինակ, «ЭКОНОМИЯ» տերմինը, ինչպես վերևում նշեցինք, թարգմանվել է «տնտեսություն», «տնտեսում», «խնայողություն»։ Տնտեսական գրականության մեջ հաճախ նման «բաղմանշանակելիությունը» ստեղծում է մի շարք գործնական անհարմարություններ, պատկերացումների շփոթ, արդումենտացիաների անպարզություն, անհասկանալիություն։ Տվյալ դեպքում տերմինաբանության տեսակետից «ЭКОНОМИЯ» բառը պետք է թարգմանել միայն «տրնտեսություն» և «տնտեսում»։

Սակայն, մի՞թե օտար լեզուներում գործածվող տնտեսագիտական բազմաթիվ տերմիններ պետք է պարտադիր կերպով թարգմանել հայերեն: Կան բազմաթիվ միջազգային ճանաչում գտած այնպիսի տերմիններ, որոնց թարգմանությունը միանգամայն ավելորդ է, և դրանք մտել են արդի հայոց լեզվի մեջ: Օրինակ, «սոցիալիզմ», «կոմունիզմ», «կոմունիստ», այնպիսի բառեր, ինչպես, օրինակ՝ «ազիտատոր» բառը, որը մեր կարծիքով հայերեն պետք է գործածել «ազիտատոր»: Սխալ և ծիծաղելի կլինի օգտագործել «հուղարկու» բառը:

Եթե ուզում ենք թարգմանել «балансоведение» հասկացությունը, հայերեն պետք է ասել «հաշվեկշռագիտություն», բայց ավելի լավ չի՞լինի թարգմանել «բալանսագիտություն», իսկ միայն «баланс» բառի փոխարեն ասենք «հաշվեկշիռ»: Կամ «մրցում» բառի փոխարեն հաճախ գործ են ածում «կոնկուրենցիա», «ճգնաժամի» փոխարեն՝ «կրիզիս» և այլն:

Այս և նման տերմինների վերաբերյալ Վ. Ի. Լենինը ասել է, որ կան միջազգային ճանաչողություն ստացած բառեր, որոնք չպետք է թարգմանել: Նման ձևով պետք է վարվել այնպիսի տերմինների հետ, ինչպիսիք են վերոհիշյալ և դրանց նման բազմաթիվ օտար լեզուներով գործածվող տնտեսագիտական տերմինները: Չպետք է ճգնել նոր տերմիններ «սարքել», ստեղծել շինծու բառեր, հաճախ գրականության մեջ անհասկանալի, այլ աշխատել ընտրել արդեն գործածության մեջ գտնվող այնպիսի տերմիններ, որոնք ամենայն ճշգրտությամբ կարելի է գործածել տվյալ տնտեսագիտական հասկացություններն արտահայտելու համար:

Պետք է խուսափել նաև ավելորդ կրճատումներից և բառդումներից, որպիսիք տեղ են գտել որոշ տնտեսագիտական աշխատություններում, ինչպես, օրինակ, «հավելարժեք», «արժեձև», «փոխանակարժեք», «սպառարժեք», «հողառենտա», «արժեկազմ», «արժեկազմիչ», «կապիտալաձև», «համաշխարհաշուկա», «հավասարամեծ», «շահութանորմա» և այլն: Այդ տերմինները աստիճանաբար գործածել առանց հապավումների, հետևյալ ձևով՝ «հավելյալ արժեք», «արժեքի ձև», «փոխանակային արժեք», «սպառողական արժեք», «հողային ռենտա», «արժեքի կազմ», «արժեքի կազմիչ», «կապիտալի ձև», «համաշխարհային շուկա», «հավասար մեծություն», «շահույթի նորմա» և այլն: Սրանք տնտեսագիտական բառարան կազմելու հիմնական սկզբունքներն են:

Այս իսկ առումով կցանկանայինք մի քանի խոսք ասել «Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարանի» (կազմող՝ Թադ. Ավդալբեգյան) մասին, որը նման կարգի առկա միակ բառարանն է և լույս է տեսել վերջերս:

Թադ. Ավդալբեգյանը առաջին անգամ ձեռնամուխ լինելով Գ. Մարքսի «Կապիտալի» թարգմանությանը գերմաներեն բնագրից, բազմաթիվ նոր տերմիններ ստեղծեց: Դա անխոնջ գիտնականի վաստակներից մեկն է: Անցել է մի քանի տասնամյակ, բայց մինչև այժմ՝ չկա ստեղծած տերմինների զգալի մասը չի կորցրել իր նշանակությունը և լայնորեն օգտագործվում է տնտեսագիտության մեջ: Բայց, այդուհանդերձ, պետք է նշել, որ Ավդալբեգյանի ստեղծած մի շարք տերմիններ չբունեցին ժամանակի քննությունը և կիրառություն չգտան: Դրանցից են, օրինակ՝ «պտուտապարբերաշրջան», «աշխատապարբերաշրջան», «արտադրամասշտաբ», «համաշխարհադրամ», «բոնաշխատանք», «արժեքադրամաս», «նյութափոխհատուցում», «համաշխարհաշուկա», «արժեհարաբերություն»: Այս բառերը այժմ չեն գործածվում ոչ մի քաղա-

քատնտեսության դասագրքում, ինչպես նաև «Կապիտալ»-ի առաջին հատորի ուսերենից կատարված երկրորդ թարգմանություն մեջ, որը լույս տեսավ Թադ. Ավդալբեգյանի թարգմանության հրատարակումից հետո ականավոր քաղաքական գործիչ և տնտեսագետ պրոֆեսոր Հայկ Աղաաթյանի խմբագրությամբ: Այս թարգմանությունը հետագայում դարձավ «Կապիտալ»-ի ուսումնասիրության միակ աղբյուրը, որ հասկանալի և պարզ թարգմանված մի աշխատություն է:

Թադ. Ավդալբեգյանի նշված բառարանը հրատարակության պատրաստելու ժամանակ կատարվել են բաղմաթիվ լրացումներ: Այդպես վարվելով հրատարակության պատրաստողները գուցե և անկեղծորեն ցանկացել են այն հարստացնել Թադ. Ավդալբեգյանի մահից հետո անցած ժամանակաշրջանում ստեղծված և առաջացած բաղմաթիվ նոր տերմիններով և դրանով իսկ բառարանը դարձնել լրիվ օգտագործելի մի ձեռնարկ՝ ժամանակակից պայմաններում: Այդ սկզբունքը միանգամայն իրավացի է և ողջունելի: Սակայն բառարանը տպագրված վիճակում կարգալուց հետո յուրաքանչյուրի մոտ առարկություններ են առաջանում բաղմաթիվ նոր մուծված տերմինների նկատմամբ: Այդ առարկությունները երկու կարգի են. 1. արժև՝ արդյոք տվյալ տերմինը դարձնել տնտեսագիտական և ղետեղել տնտեսագիտական բառարանում: 2. Նոր մուծված տվյալ հայերեն տերմինը արդյո՞ք ճիշտ է արտահայտում որոշակի տնտեսագիտական հասկացություն:

Բառարանի մեջ ընդգրկված մոտ 32 հազար բառերից, ցավոք, տնտեսագիտական տերմինների թիվը հազիվ հասնում է 5—6 հազարի, մնացած մոտ 25—26 հազար բառերը տերմիններ չեն ընդհանրապես և կապված չեն տնտեսագիտության հետ:

Հարց է ծագում, թե ինչու է բառարանը կոչվում «Տնտեսագիտական տերմինների բառարան», երբ այն ավելի շատ հասարակագիտական բնույթի է, քան տնտեսագիտական: Մի՞թե այն ամենը, ինչ գտնվում է տնտեսության մեջ, տնտեսագիտական տերմիններ կարելի է համարել. օրինակ՝ «շուն», «պահարան», «եղ», «կով», «տավար», «անասուն» և այլն, որոնք կապված են տնտեսության հետ, «տնտեսագիտական տերմիններ» են: Նույնիսկ «беременность», «беременная», «роды», «рождение» և այլ բաղմաթիվ նման բառեր համարվել են տնտեսագիտական տերմիններ և հատուկ տեղ գտել բառարանում: Որովհետև տնտեսության մեջ կան սենյակներ, սպասանհրաժեշտ էր այնտեղ մտնել «комната»-ն, «комната туалетная»-ն: Տպագրության պատրաստողները մոռացել են ղետեղել ավելի ակտուալ տերմիններ, բայց դրա փոխարեն թողել են «уборщик», «бутыль», «сноп», «бетон», «фотография» բառերը և բաղմաթիվ նման բառեր, որպես «տնտեսագիտական տերմիններ»:

Տնտեսագիտության հետ ի՞նչ կապ ունի, օրինակ, «моральный облик строителя коммунизма»: Կամ ինչո՞ւ է «баррель»-ը հայերեն մնացել «բարել»: Ի՞նչ է նշանակում այդ տերմինը՝ անհասկանալի է: Կամ «стабилизация капитала»-ն թարգմանվել է «կապիտալիզմի կայունացում» (հավանական է սա սրբագրական սխալ լինի), «общество оптовых закупок»-ը՝ «մեծուրդագնման ընկերություն» և այլն:

Կան նաև այնպիսի բառեր, որոնք բոլոր բառարաններում թարգմանվում են միանգամայն հասկանալի ձևով և արդեն մտել են մեր բառացանկի մեջ և այլևս փոփոխության կարիք չեն զգում, այնինչ այս բառարանում տրվում են ոչ

ճիշտ թարգմանությամբ և երբեք չեն մտնի գործածության մեջ: Օրինակ, «Кипа» բառը: Բոլոր բառարաններում մինչև հիմա ճիշտ կերպով թարգմանվել է «հակ», «փաթեթ», «սպառառ», «կույտ», իսկ նոր տնտեսագիտական բառարանում թարգմանվում է «կապնակ», «կապակ»:

«Бунт» տերմինը թարգմանված է «խռովություն»: Իհարկե, ճիշտ է: Բայց տնտեսագիտության մեջ «բունտ» նշանակում է կապոց, կամ նույնպես «հակ»: Օրինակ՝ «бунтовый товар» — «կապոցներով, հակերով (վաճառվող) ապրանք», «табак в бунтах» — կապոցներով ծխախոտ և այլն: Ո՞ւմ են պետք այսպիսի թարգմանությունները, օրինակ՝ «рационализация производства» — «արտադրության ռացիոնալիզացիա» փոխանակ «ռացիոնալացում», «кантализация» — «կապիտալիզացիա» փոխանակ «կապիտալացում», «индустриализация» — «ինդուստրալիզացիա» փոխանակ «ինդուստրացում» և այլն:

Հավանաբար, բառարանի ոչ տնտեսագիտական բնույթը արդարացնելու նկատառումով «Առաջաբանի փոխարեն» նախաբանում գրված է. «Բառերի ու տերմինների ընտրությունը կատարելիս հեղինակն առաջնորդվել է այն սկզբունքով, որ արդի տնտեսագիտությունը օրգանապես առնչված է փիլիսոփայության, պատմագիտության, իրավագիտության և այլ հասարակագիտական դիսցիպլինների հետ: Ահա թե ինչու այս բառարանում զետեղվել են և այնպիսի բառեր, որոնք առաջին հայացքից զուտ տնտեսագիտական չեն»: Ինչպես մենք արդեն նշել ենք, ոչ միայն առաջին հայացքից, այլև բոլոր հայացքներից ելնելով, պիտի ասել, որ երբ ասում ենք «տնտեսագիտական բառարան», ապա այնտեղ պիտի լինեն «զուտ տնտեսագիտական» բառեր ու տերմիններ: Իսկ այն, ինչ գրված է նախաբանում, անընդունելի է և որ այն արվում է միայն արդարացնելու համար բառարանի ոչ տնտեսագիտական բնույթը, որովհետև վերը նշված գիտությունները ոչ միայն «օրգանապես չեն առնչված», այլ, ընդհակառակը, ավելի ու ավելի են սահմանազատվում տնտեսագիտությունից: Վերջինիս ավելի շատ սկսում են «առնչվել» մաթեմատիկական գիտությունները, հաշվային տեխնիկան և այլն:

Այդ բոլորի հետևանքով նշված «Տնտեսագիտական տերմինների բառարանը» դարձել է սովորական ռուս-հայերեն բառարան և նրա ամբողջ բառացանկը լիովին համընկնում է գիտությունների ակադեմիայի կողմից 1958 թ. հրատարակված քառահատոր «Ռուս-հայերեն բառարանի» բառացանկին և 1932 թվականին Հայպետհրատի կողմից հրատարակված ռուս-հայերեն երկհատոր բառարանի բառացանկին՝ որոշ հավելումներով և թարգմանությունների փոփոխություններով: Որոշ նոր և արժեքավոր տերմինների կողքին տրվում են նաև բազմաթիվ անհաջող տերմիններ: Թվենք դրանցից ևս մի քանիսը:

Մինչև հիմա մեզ հայտնի էր, որ «изделие» բառը թարգմանվում և գործ էածվում՝ «շինվածք», «գործվածք», «ապրանք», «արտադրանք»: Օրինակ՝ «фабричные кустарные изделия» — «գործարանային և տնայնագործական արտադրանքներ», «трикотажные изделия» — «տրիկոտաժային գործվածքներ», «водочные изделия» — «օղեգործական ապրանքներ» (տե՛ս քառահատորը, էջ 688): Նույնը կարգում ենք երկհատորյակում: Օրինակ՝ «изделие» բառի դիմաց գրված է «շինվածք», «գործվածք», «կերտվածք»: Այնուհետև կապակցություններում «Деревянные изделия» — «փայտե շինվածքներ»,

«փայտեղեն շինվածքներ», «изделия кожаные» — «կաշվե գործվածքներ», «կաշվեղեն շինվածքներ», «каменные изделия» — «քարե կերտվածքներ», «изделия шелковые» — «մետաքսե գործվածքներ», «մետաքսեղեն գործվածքներ»: Ինչպես երևում է մեր օրինակներից, միայն այս «изделие» բառի հայերեն գործածության մեջ վերոհիշյալ երկու բառարաններում կա մեծ շփոթություն: Բայց այնտեղ կա նաև մի ճիշտ բան, որ դա «շինվածք» կամ «շինածո» բառն է, որը ճիշտ է արտահայտում բառի իմաստը, սակայն վերջինս նույնպես անգործածելի է բոլոր կոնտեքստներում: Իսկ ինչ վերաբերում է մնացածներին, դրանք բոլորն էլ ճիշտ չեն գործածվում:

Վերոհիշյալ բառարանում դրա դիմաց կա մի նոր տերմին՝ «արուրք», չնայած որոշ կապակցություններում շեղում է կատարվում այդ «արուրք»-ից և դարձյալ գործ է ածվում «ապրանք» բառը, մոռացության մատնելով, որ «ապրանք» բառի ուսերեն հոմանիշը «товар» բառն է, օրինակ՝ «изделия ремесленные» — «արհեստարուրք», «архестастավորական ապրանք», «изделия текстильные» — «մանածագործական ապրանք»: Այստեղ հեղինակը մոռանում է, որ «մանածագործությունը» «пряdn. льная» — բառն է, իսկ «текстильная» բառը հայերեն «ջուլհակային» բառն է, պետք է ասել «ջուլհակային ապրանքներ» կամ «տեքստիլ ապրանքներ», կամ այսպես՝ եթե տրված է «текстильно-пряdn. льная», ապա պետք է օգտագործել «ջուլհակամանածագործական» տերմինը: Ուրեմն, այս բառարանում ևս մենք հանդիպում ենք «изделие» տերմինի մի քանի տարբերակների, որոնց թվում նաև «սպասեղեն», «գործվածքեղեն», «ապակեղեն» և այլն: Այսպիսով, թե նախորդ բառարանում և թե այս բառարանում «изделие» տերմինի համար չի տրվում միասնական հայերեն մի տերմին և այս հարցում գոյություն ունի անթույլատրելի շփոթ: Մինչդեռ այդ տերմինի հայերեն ճիշտ, միանգամայն բարենշյուն և բոլոր տեսակի կապակցություններում համատարած գործածելի տերմինը դեռևս 1927 թվականին իր հրատարակած մի բառարանում տվել է ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանը «բանվածք» բառով: Որ կապակցություններում ուզում եք գործածեք, բոլոր տեղերում ուսերեն «изделие» բառի դիմաց մեծագույն ճշտությամբ կարելի է գործածել հայերեն «բանվածք» տերմինը և այսպիսով վերացնել միանգամայն քմահաճ ձևերով գործածվող բազմերանգ տարբերակները, թողնելով միայն «բանվածք»-ը: «Ікань» բառը թարգմանված է «հյուսվածք»: Ճիշտ է, «ткань»-ը նաև «հյուսվածք» է, եթե այն գործ է ածվում բժշկության մեջ, իսկ տնտեսագիտության մեջ՝ այն նշանակում է «գործվածք»: «Консорциум»-ը թարգմանված է «համիրացք», իսկ կապակցություններում ոչ մի տեղ այդ բառը չի գործածվում հենց նույն բառարանում, այլ գործածության մեջ է մնում «կոնսորցիում» բառը: Այստեղ խախտված է բառարանակազմության սկզբունքը, չի երևում թեմատիկ բառարանի բնույթը և նկատվում է որոշ խառնաշփոթություն: Մեր միտքն ապացուցելու համար բերենք դարձյալ մի օրինակ: «Съем» բառի դիմաց գրված է «վարձակալում» և տրված է հետևյալ կապակցությունը՝ «съем земли» — «հողի վարձակալում», այն ժամանակ, երբ «съем земли» տերմինը այժմ շատ սակավ գործածելի է, իսկ «съем продукции»-ն, որն ամեն օր է գործածվում թե մամուլում և թե տնտեսագիտական գրականության մեջ, բառարանում չկա, և այս դեպքում «съем» բառը երբեք էլ վարձակալում չի նշանակում, այլ սա արտադրանքի «ստացք» է:

Մի՞թե որևէ տնտեսագիտական գրականության մեջ գործածելի է «отчисления от роста прибылей»—«շահույթաճաճանում»։ Լեզուն, տերմինը պետք է լինի պարզ, հասկանալի և ճիշտ արտասանելի, այսպիսի անհաջող բարդումները խճողում են լեզուն և դժվարացնում դրանց կիրառությունը։ Կամ թե այսպիսի տերմին՝ «явка»—«հայտեկ», «явка на работу»—«աշխատանքի հայտեկ»։ Ուրեմն՝ պետք է ասել, «ես հայտեկեցի աշխատանքի» փոխանակ «ես ներկայացա աշխատանքի»։

Մամուլի սուղ էջերը մեզ հնարավորություն չեն տալիս բերել բոլոր նման օրինակները, որոնք բավական մեծ թիվ են կազմում։ Ապա «извлечение» բառը թարգմանված է «արտակորզում», «քաղվածք»։ Այս տերմինները տնտեսագիտության մեջ անգործածելի են։ Օրինակ՝ «извлечение прибылей» մի՞թե կասենք «շահույթի արտակորզում»։ Ո՛չ, պետք է ասենք «շահույթի կորզում»։ Հանքերի հետ կապված կապակցություններում կարելի է ասել «հանքի արտակորզում» կամ «извлечение средств» գործ է ածվում միջոցների հայթայթման իմաստով, մի՞թե կարելի է ասել «միջոցների արտակորզում»։ Վերջիններ «ЭКОНОМИКА» բառը։ Թվում էր, թե տնտեսագիտական նեղ մասնագիտական բառարանում այս տերմինը թերևս անառարկելի ճիշտ պետք է տրվեր։ Բայց այն թարգմանված է «տնտեսականություն», «տնտեսություն»։ Վերջինս «տնտեսությունը» միայն «ХОЗЯЙСТВО» կամ «ЭКОНОМИЯ» բառի դիմաց գործածվող տերմինն է և երբեք «տնտեսությունը» «ЭКОНОМИКА» չի թարգմանվում։

«ЭКОНОМИКА» բառը բոլոր օտար լեզուներում, նաև հայերենում մնում է միայն «էկոնոմիկա» և ոչ մի կերպ ենթակա չէ թարգմանության, ինչպես այդ արվում է բառարանում, որովհետև «ЭКОНОМИКА» նշանակում է արտադրական հարաբերությունների ամբողջականություն։ Իր ժամանակ Ա. Արասխանյանցը «Մուրճ» ամսագրում գործ է ածել էկոնոմիկայի փոխարեն «տնտեսականություն», «տնտեսություն» տերմինը։ Ինչ արած, այն ժամանակ հնարավոր էր, իսկ այժմ, երբ մարքսիստական քաղաքատնտեսության կատեգորիաները և բազմաթիվ հասկացություններ գիտականորեն ճշտվել և մեկնաբանվել են՝ մի՞թե այժմ ևս մենք կարող ենք հետևել անցյալի ոչ ճիշտ թարգմանություններին։ Արասխանյանցը կարող էր չիմանալ, թե ինչ իմաստ է դնում Կ. Մարքսը «էկոնոմիկա» հասկացության մեջ։

Իսկ ի՞նչ է նշանակում «общественная или гармоничная экономика»։ Հայտնի են ֆեոդալական, բուրժուական, սոցիալիստական, ասիական, նախնադարյան էկոնոմիկաներ, բայց ի՞նչ է նշանակում «հանրային» կամ «համոնիկ (ներդաշնակ)» էկոնոմիկա։ Մարքսի ո՞ր աշխատության մեջ է գործածվում «ներդաշնակ» կամ «հանրային էկոնոմիկա» բառերը։

Պետք է նշել, որ այս բառարանում կան բազմաթիվ շատ հաջող և լավ ստեղծված տերմիններ, սակայն կան նաև հնարովի բազմաթիվ տերմիններ, որոնք քաղաքացիություն չեն կարող ստանալ, ինչպես, օրինակ՝ «կադրերի» փոխարեն «հիմնակազմ» գործածելը և նման բազմաթիվ տերմիններ։

Բառարանը ավելի շատ կշահեր, եթե այն լիներ զուտ տնտեսագիտական և կազմվեր վերջին 3—4 տասնամյակներում քաղաքացիություն ստացած և գործնական կիրառման ընթացքում ստուգված տերմինների համեմատությամբ։ Այն ժամանակ կարելի էր խուսափել արխայիզմից, հնացած և ոչ գործածական բառերից։

Այնուամենայնիվ, նշված թերությունները չեն նսեմացնում բառարանի տեսական և գիտական արժեքը:

Այսպես թե այնպես, չի կարելի ժխտել այն մեծ փորձը, որը ձեռք է բերվել նշված բառարանի ստեղծման և հրատարակման ընթացքում:

Օգտվելով արդեն գոյություն ունեցող այս փորձից, հնարավոր է և պետք է ստեղծել մի այնպիսի տնտեսագիտական տերմինների բառարան, որն ընդգրկի նաև վերջիս տասնամյակներին ստեղծված հայ տնտեսագիտական տերմինաբանության նվաճումները և կոմունիստական շինարարության ընթացքում առաջ եկած նոր հասկացությունները: Դրանով մեկընդմիջտ վերջ կտրվի գոյություն ունեցող շփոթին ու վերջնականապես կհաստատվի միասնականություն տնտեսագիտական տերմինների գործածության բնագավառում: